նախօրեակին գտնուող մեր հոգևոր դաւակներին և վերացնել վիճելի խնդիրը։ Կատարելապէս հաւատում ենք, որ հզօր Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչը կիրագործէ մեր օրինական բաղձանքները»։

Յունիս 16-ին Երևանում տեղի ունեցաւ հրապարակային մեծ ժողով, ուր կրակոտ ճառեր խօսեցին Դ. Անանունը, Ա. Խոնդկարեանը, Վ. Խորէնին, Դրօն և ուրիշները։ Ժողովը ընդունեց հետևեալ բանաձևը.

«Յունիս 16-ի հրապարակային ժողովը խորը յուզումով լսեց այն լուրը, որ Ղարաբաղում, անգլիական միսիայի աչքերի առջև Ազրբէջանի զօրքը Սուլթանովի գլխաւորութեամբ աւերել է հայկական վեց գիւղեր, կոտորել է աւելի քան 600 կին ու երեխաներ, սպառնում է շարունակել կոտորածը և ստիպել Հայկական Ղարաբաղը արեան մէջ ողողելու։ Մենք համոզուած ենք, որ այս շարունակութիւնն է Էնվեր-Թալէաթեան քաղաքականութեան։ Այնտեղ, Թիւրքիայում, ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան աչքերի առջև կոտորածի ենթարկուեց միլիոնաւոր հայ ժողովուրդը. այստեղ, Ազրբէջանում, դաշնակից ժողովուրդների աչքերի առջև աշխատում են ոչնչացնել Ղարաբաղի հայ ազգաբնակութիւնը և հաստատել իրենց արիւնոտ կարգերը այս երկրում։ Խորը գիտակցելով մեր պարտականութիւնը՝ վճռականապէս բողոքում ենք այն բարբարոսութեան դէմ, որ գործադրում է Ազրբէջանը։ Պահանջում ենք անյապաղ հեռացնել Ղարաբաղի սահմաններից Սուլթանովի աւազակախումբը։ Մենք յայտարարում ենք, որ Ղարաբաղի իրաւունքների պաշտպանութեան հարցում մեր կառավարութիւնը լիակատար աջակցութիւն կարող է գտնել մեր կողմից։ Բա՛ւ է, որքան կոտորուեց հայ ժողովուրդը Թիւրքիայում, Ղարաբաղում, Ազրբէջանում։ Մենք այլևս չենք կարող թոյլ տալ, որ եւրոպական մեծ ժողովուրդների ներկայացուցիչների աչքերի առջև մեր կանայք ու երեխաները ենթարկուեն կոտորածի։ Պահանջում ենք, որ դաշնակից պետութիւնների Կովկասում գտնուող ներկայացուցիչները վերջ դնեն կոտորածի և աւերի քաղաքականութեան։ Պահանջում ենք հայկական կառավարութիւնից բուռն կերպով բողոքել դաշնակիցների ներկայացուցիչներին և յանուն քաղաքակրթութեան ու մեր ժողովրդի ֆիզիկական գոյութեան պաշտպանել հայ ժողովուրդը ձեռքի տակ ունեցած բոլոր միջոցներով։ Մենք բողոքում ենք և մեր հիացմունքն ենք յայտնում Ղարաբաղի մեր եղբայրներին, որոնք հերոսաբար կռւում են Սուլթանովի բռնակալութեան դէմ յանուն ժողովուրդների ինքնորոշութեան ու քաղաքակրթութեան»։

Այս, հաղարաւոր բազմութիւնը ցոյց արաւ Խորհրդարանի ու կառավարական շէնքի առջև և նւագախմբի ուղեկցութեամբ շարժւեց դէպի անգլիական ներկայացուցչութիւնը, որի առջև նոյնպէս արտասանեցին ճառեր և յանձնեց բանաձևը։

Թիֆլիսում տեղի ունեցան երկու բազմամարդ հրապարակային ժողովներ — յունիս 8-ին և 22-ին։ Վերջինին մասնակցում էին քառասունից աւելի ազգային ու հայրենակցական կազմակերպութիւններ ու հաղարաւոր ներկաներ։ Նախագահում էր Յովհ. Թումանեանը։ Ընդունած բանաձևը պահանջում էր դաշնակիցների միջամտութիւնը, դր. Սուլթանովի վտարումը Ղարաբաղից, կոտորածի հեղինակների ձերբակալութիւնն ու պատժելը և Ղարաբաղի միացումը Հայաստանին։

Բողոքի ձայն բարձրացրին և Հայաստանի կառավարութիւնը, Ազրբէջանի Խորհրդարանի հայ պատգամաւորներն ու Ղարաբաղի Ազգ. Խորհուրդը։